# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հուլիսի 2026 թվականի N:291 - Ա ք. Գյումրի

ՆԱԻՐԱ ԴԱՎՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Նաիրա Դավոյանի 2026 թվականի հուլիսի 13-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Դավոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 7-ը ներառյալ:

2.Նաիրա Դավոյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Աննա Հայրապետյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է